



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

թիւ 9

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԻՆՆԵՐՈՐԴ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1870



Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ԹԻՒ 12-14

— 1870 —

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1870

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ս. ԱՂԱՐԼԿԵԱՆ ԷՖ. (ՓՈԽԱՏԵՆԱՊԵՏ)

Կ Ա Ր Գ Խ Ն Դ Ր Ո Յ

1. Վաւերացումն ընտրութեան Նորընտիր երեսփոխանաց:
2. Ժողովրդեան կողմէ ներկայացեալ հանրագիրներ:
3. Ներքին կանոնադրութիւն Ընդհ. Ժողովին կամ ատենական կանոնք:
4. Վերաքննութիւն Սահման.— Գլուխ Թաղ. մատակարարութեան:

Ատենը բացուեցաւ ժամ 7ին 'ի ներկայութեան 48 երեսփոխանաց:

Ատենապետ էֆէնտին աղագրարութեամբ բացակայ մէկ քանի երեսփոխանաց անունները յիշելէ ետքը՝ Օտեան էֆէնտի կողմէ ուղղեալ նամակ մը ընթերցաւ, որով հրաժեշտ կուտար իր ատենապետութեան պաշտօնէն, յայտնելով թէ չպիտի կրնայ ըստ արժանւոյն կատարել զայն:

Այս նամակին ընթերցումէն ետքը՝ Ատենապետ էֆէնտին յարեց թէ զիւանը կը բաղձայ որ Օտեան էֆէնտի հրաժարականը անընդունելի համարուի, և Սրբազան Նախագահը անձամբ միջնորդ կանգնելով յորդոր կարգաց անոր, որ իւր հրաժարականը ետ առնու:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այս պարագային մէջ գիւանն իւր հաճութիւնն յայտնելէ առաջ, պարտաւոր էր ժողովին կամաց դիմել, և անոր որոշումը ընդունիլ, սակայն այնպէս չեղաւ, զես ժողովն այս մասին կարծիք մը կառք մը չյայտնեց: Ըստ իս Օտեան էֆէնտի

հրաժեշտը պէտք է անընդունելի համարուի, մանաւանդ այս գլխաւոր պատճառին համար որ նա զառաջինն իւր պաշտօնին զլուխն անցած ատեն, այնքան հեռի կ'երևէր հրաժարել, որ մինչև իսկ ժողովոյն բացատրեց թէ ինչպէս կ'ըմբռնէ ինք ատենապետի պաշտօնը, և ինչ պայմաններով յանձն կ'առնու վարել զայն: Եւ երբ այսօր յանկարծուստ իւր հրաժարականն երեւան կու գայ, իրաւունք կու տայ մեզի կարծելու, թէ վերջին նիստէն ի վեր այս հրաժարականին տեղի տուող միջանկեալ պարագայ մը, շարժառիթ մը պատահած է, որու անտեղեակ կը գտնուի ժողովը, և զոր սակայն հարկ է զիտնայ, անոր հրաժարականի խնդիրը լուծելու համար:

ԱՏԱՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն այս պարագային մէջ միայն իւր փափաքը յայտնեց և սակայ ժողովին ընելիք որոշմանը չի մնասեր բնաւ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Առանձին նամակ մ'ալ ինձ ուղղած է Օտեան էֆէնտի, որով ատենապետի պաշտօնէն հրաժեշտը ընդունելի ընել













Մշտնապահ այդ իրաց խորին գիտակցութեամբը գաւառաբնակ ազգայնաց հարստահարութեանց վրայ պաշտօնական տեղէն իւր ձայնը բարձրացուցած և ազգին այնքան սիրելի եղած է մէկ տարուան մէջ ինչ որ նոր ի նորայ փորձառութեամբ կրցաւ գիտնալ և միջոցներ ՚ի գործ դնել: Այժմ է որ ընդ հ. ժողովը գիտնայ Սյունաքանակաւ կ'առաջարկել որ հարստահարութեանց խնդիրը՝ յանձնորի Արքայուն Պատրիարքին և խառն ժողովին և անոնց տեղեկագրին հետ վերադարձնուի ընդ. ժողովին:

ՄԵԼՔԻՍԵՆԷԿ ԿԻՉՅՊ. — Ժողովը գիտնանուցաւ որ վարչութիւնը հաւաստակամ Մասնաժողով մը ունի: որ ՚ի հարկէ՝ գաւառներէն եկած բարեկալիքի բողոքներ կ'ընդունի: Այս հանրագիրը անուշտ զուրկ է այն հանգամանքներէն ու մանրամասնութիւններէն որոք հաւաստակամ Մասնաժողովը Վիսաւր գտնուած բողոքագրիները կը կրէ: Այս Մասնաժողովը պահանջուած տեղեկագիրը պատրաստելու համար ընդարձակ նիւթ ունի: յորմէ ընդ. ժողովը հարստահարութեանց վրայ ամենէն ճիշդ և ըզշ գաղտփարմը կրնայ առնուլ: Ըստ իս աւելի օգտակար կ'ըլլայ այս խնդիրը Գաւառական Մասնաժողովը գարձնել և անկէ մանրամասն տեղեկագիր մը ուղել:

ԵՆԻՍՏՐՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Կը վախաբէի այս վիճարանութեան չմանակցիլ բնակ: բայց գիտեցի որ անոնք խնդրոյն բուն կէտէն հեռացան և սցնպիսի առարկութիւններ յարուցին: որ հարկ եղաւ բացառութիւն մը տալ: ընդ. ժողովը հանրագիրներ ներկայացած են ընդհանուր խնդրոց վրայ: զանոնք կարգաւ և սովորական անօրինութեան ձեւերով ալ տարբէրէր: Եթէ կանխաւ վարչութեան յանձնել և անոր տեղեկագրերը ընդունելէ ետքը՝ խնդիրը նկատողութեան առնուլ: Աւսովի այս երկու գրելաւոր կարծիքներն երեւան ելած են խնդրոյն վրայ: զորս անկողակեով բացատրեցի: Եթէ ոչ իրենց բուն բաւերովը դէժ խնամողը: Տարակոյս չկայ թէ ընդ. ժողովը Մասնաժողովական ժողով մըն է: ինչպէս նաեւ վարչութիւնն ալ գործելու բնական եղանակը օրինաւորութիւնը: ցոյց կու տայ թէ այս տեսակ խնդիր մը եկած ատեն, ինչ կերպով հարկ է շարժիլ մեր առջև օրինակներ կան և հետի երթալու պէտք չկայ: Թէ և այդ հանրագիրները դեռ ժողովը տեսած չէ, ասկայն մտածողներ և զոնք գուշակելու թէ վարչութեան դէմ ան-

բաստանութիւն մը, գանդատ մը կը սարուանակէ, ուրեմն հանրագիրներուն պարունակութիւնը պիտի չստանդ և հարեւանցի մը չլռակեցին: Կամ չգիտէին ու եմթադրեցին: Եթէ գիտէին, լաւ կ'ըլլար որ ժողովին կարգալու հարկ մը չիտղլով մեկնէին անոնց խնամը: Մեզի համար միայն հանրագրի մը անուն կայ, որ ընդ. ժողովը ուղղելու ըլլալուն համար ինչպէս Արքայուն նախագահը լուս: վարչութեան հաղորդուած չէ: հաս կարգացուի կամ ոչ, գարձնուի վարչութիւնէն բացառութիւն ուղել հարկ պիտի ըլլայ: Թէ արդեօք անտարբեր հանգիստուն և կրած է այն դէպքերուն, որք Տէրութեան կամաց հակառակ գործուեր են: վարչութիւնը տեղական խնդիրներու հողէ սարստ իր բոլոր ձեւութեանց կէտ նպասակի դրած է գաւառական ազգայնաց բարեկեցութեան խնդիրը: իր ամենօրեայ վարչական բոլոր գործողութիւններն այդ նպատակին կը դիմեն: ուստի տարակոյս չկայ թէ ընդ. ժողովը առանց վարչութեան կարծիքն առնելու, անօրինութիւն մը չ'ուզեր ընել: այս գաւառական խնդրոյն վրայ: բայց այս նիստին մէջ մէկէն ՚ի մէկ պատասխանել ինչպէս ըսին, չի կրնար ըլլալ: վստահ կարեւոր պարագանք կան: նախորդ վարչութեանց անօրինութիւնները կան: ամենքն ալ իրարու յարակից, նկատողութեան արժանի, և ժամանակի կարօտ, ամիսփոօելու համար: Արդէն հանրագրին ի մաստիս վրայ բաւական տեղեկութիւն արուեսցաւ: անոր համարօտութիւնը ատենագրութեան մէջ կ'արձանագրուի և հանրագիրը կուղարկուի վարչութեան որ զայն ՚ի քնին կ'առնու և այս մասին ինչ որ ըրած է ինք, գիտէ: կը հարող է ընդ. ժողովին: Թերեւս ինչպէս կասկած յարուցին, անոր մէջ ամբաստանութիւն գտնուի վարչութեան դէմ: այս ալ խնդրոյն հետ կու գայ: զի Քաղաքական ժողովը, եթէ ստոյգ է այս, պիտի հրախրուի անուշտ այդ մասին եւս բացառութիւն տալու: Սյուպէս խնդիրը պարզուելէ ետքը՝ ընդ. ժողովը գիտակցութեամբ պարտաւարացածը կը վճռէ: բայց հիմա քանի որ մասնաւոր տեղեկութիւններէ զուրկ է, չի կրնար այնպիսի որոշում մ'ընել որ խնդրոյն պատմութեան ըզդ խած ըլլայ և անոր սակն հանգամանքները չօշարի: Գիտնին առաջարկութեան համեմատ պէտք է խնդիրը վարչութեան յանձնուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մէկ փայլ ՚ի վեր ժո-

ղովը կը վիճարանի հարստահարութեանց վերաբերեալ հանրագրին ընթերցման և խնդիրը Քաղ. ժողովը վերադարձնելու առաջարկութեան վրայ: Ընթերցումը՝ զոր ժողովը կրնայ լսել միշտ, խնդրոյն կու թեան վրայ կատարեալ լոյս տալով բնագիտ կ'ուղղէ նաեւ անոր լուծման միջոցները: այս տեսութեամբ պարտ կը համարուի ընթերցման առաջարկութիւնը առաջքուէի դնել և այնուհետև խնդիրը Քաղ. ժողովը յանձնելու կամ չյանձնելու առաջարկութիւնը: Եթէ ժողովը հարկ դատի գոցել անոր վրայ բացուած վիճարանութիւնը:

Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ հանրագրին ընթերցման առաջարկութիւնը և ժողովը մեծազոյն մասով կ'որոշէ զայն, հետեւապէս հանրագիրը կը կարգացուի: որոյ աւսովի պատճէնը:

Արքայուն Տէր:

Մեր գաւառաբնակ հայրենակից եղբարց քառասուրբ վիճակը մեր սրտին մահացու խոց մըն է: Իրրեւ չայ և իրրեւ Քրիստոսեայ անհրնար է մեզ հողւով և մտօր կարեկից չըլլալ հարստահարութեան տակ ճնշող մեր եղբարց և քերց: անտարակոյս եմք որ այդ ոճիրները մեր բարեխնամ Տիրոջ և վեհափառ Սուլթանին բարձր կամաց և հորին վեհափառութեան կառավարութեան օրինաց հակառակ կը գործուին: Ուստի խճի պարտականութիւնը կ'ստիպէ զմեզ Ձեր հայրագրով խնամոց դիմել և խնդրել որ այդ ազեղից անմիջապէս դարման մը տարուի անտարակոյս Ձեզի հետ մէկտեղ բոլոր կրօնի և Ազգութեան պատուոյն նախանձամբ իր սրտերը այդ անլուր և անօրինակ եղեռնագործութիւններէն կը ճիլին: Ուստի իրրեւ հասարակաց զգացման ներկայացուցիչ կը համարձակմք առաջարկել Ձեր Արքայութեան: որ դուրմարուելիք նրեւփոխանական ժողովը առաջին նիստին նախ այս խնդիրն առաջարկուի:

Գիտենք, Արքայուն Տէր, որ Ազգային դատարակութեան, պարտուց, եկամտից և այլ զանազան խնդիրներ ժողովը ուշադրութիւնը գրաւելու մեծ կարեւորութիւններ ունին: բայց կրօնի և պատուոյ խնդիրը՝ աննոցմէ անհամեմատ առաւելութեամբ ստիպողական է, որուն օրինաւորապէս լուծուիլը անուշտ միւսներուն դիւրաւ լուծուելուն ճատից կը բանայ:

Անտարակոյս ենք, Արքայուն Տէր, որ մեր առաջարկութեան օրինաւորութիւնը՝ Ձեր Արքայութեան ազու բանիւր նրեւփոխանական ժողովը պիտի ճանչնայ, որուն համար մեր խորին շնորհակալութիւնը կը մատուցանենք Ձեզ, և կը խոստանանք մեր երախտագիտութիւնը փորձով ալ յայտնելու համար: ՚ի վճարումն ազգային պարտուց մեր օժանդակութիւնը չըզանալ:

Մաղթելով Ձեր Արքայութեանը երկար և և խաղաղ կեանք, ՚ի բարօրութիւն մեր սիրելի և տառապեալ հայրենակցաց, եմք միւլ Ձերդ Արքայութեան:

Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայք, (Ստորագրութիւնը):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Աւսովի հանրագիրը որ ընդհանուր նշանակութեամբ գանդատ մըն է մեր բարեխնամ Տէրութեան կամաց հակառակ գաւառաց մէջ գործուած ոճիրներուն, կրօնի և Ազգութեան պատուոյ դէմ եղած թնամանքներուն վրայ: կը մնայ ուրեմն ընդ. ժողովին որոշել թէ այս խնդրոյն բնութիւնը ինչպէս և ո՛ր պէտք է կատարել:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — Սրդէն բողոքարկուք խնդրած են որ հանրագիրը երեւփոխանական ժողովը ներկայանայ, ինչպէս որ Արքայուն նախագահն ալ այնպէս ըրած է: չիտա բուն խնդրոյն վրայ վիճարանելու և որոշում ընելու համար կու գայ հոն կը հանդի գործը: որ Արքայուն Նախագահը՝ խառն ժողովը հետ տեղեկագրէ ընդ. ժողովին, թէ մինչև ցարդ վարչութիւնը գաւառական ընդհանուր հարստահարութեանց բարձման համար ինչ միջոցներ գործադրեր և ինչ արդիւնք կրցեր է քաղել անոնցմէ: Առանց տեղեկագրի, ինչպէս Եւստութեան էֆէնտին ալ դիտեց, վարչութիւնը չի կրնար հոս ալիցալոյ մանրամասն պատասխան տալ և գոհացնել ժողովը, ամենէն բանաւոր և գիւրին միջոցն է, առ այժմ առաջարկուած կերպը ՚ի գործ դնել, որպէս զի խնդիրը հասուն տեղեկագրով մը զայ ընդ. ժողովին, որ անոր վրայ իր որոշումներն ընէ:

ԻԹԻՓՃԵԱՆ Հ. ԷՅ. — Կ'ատարկեն թէ ընդ. ժողովը այս խնդիրը ինքնին ՚ի քննին առնելու համար կարեւոր տեղեկութիւններէ զուրկ է: չի գիտեր թէ վարչութեան կողմէ գոհացուցիչ միջոցներ ձեռք առնուած են թէ ոչ: Ամենքն իս ալ գիտենք որ մինչև ցարդ Ազգ. վարչութեան այս տեսակ հանրական

խնդիր մը առաջարկուած չըլլալուն, այն նպու-  
տակաւ բանակցութեան մտան չէ Բ. դրան  
հետ : Խնդիրը նոր է, կը մնայ մեզ քննել թէ  
ինչ պատճառներէ ծնունդ առած է :

Միթէ ուրիշ մասնաւոր բողոքագիրներ ալ  
եկած չեն վարչութեան, և միթէ Բ. դրան  
հաղորդուած չեն. ընդհանուրը մասնաւորներէ  
կը բողոքանայ, մասնաւոր եղելութիւններու  
ստիժիւ եղած բողոքները՝ գոհացուցիչ վախճան  
մը չեն ընդունած, և ասկէ ծագած է ահա  
այս հանրական բողոքի գաղափարը ստորագրու-  
ղաց մտքին մէջ . . . :

Ատենապետ էֆէնտին ընդմիջելով ատենա-  
բանին խօսքը, կ'ազդարարէ թէ խնդրէն կը  
չեղի և 'ի կարգ կը հրաւիրէ զինքը : 'ի պա-  
տասխան ատենարանը կ'առարկէ, թէ բողոքոյ  
տեղի տուող պատճառը չփնտուած, ժողովը  
չի կրնար կատարուելիք քննութեան տեղը որո-  
շել հետեւապէս իր խօսից թելը ձեռք կ'առնու :

ԻՓէֆձեմէն Հ. Էֆ. — Ազգային վարչու-  
թիւնները թէև մասնաւոր հարստահարութեանց  
արարքներու դէմ գաւառներէն եկած բողոք-  
ները հաղորդած են Բ. դրան, և Տէրութիւնն  
ալ հոգ տարած է, բայց գաւառներէն դադ-  
րած չեն երբէք հարստահարեալ ժողովրդեան  
հեծհեծումները Ահա ասոնցմէ ծնած է ընդհա-  
նուր բողոքը : Նախագահ Արքայանը այս բո-  
ղոքը վարչութեան ձեռնհասութենէն վեր հա-  
մարելով ընդհ. ժողովոյ բերեր է. եթէ, օրի-  
նակի համար՝ անի վերաբերէր Քղիի այս ինչ  
պէյին կամ այս ինչ Քիւրտին բռնարարու-  
թեանցը կամ մասնաւոր դէպքի մը, գործադիր  
իշխանութեանը կը յանձնուէր ուղղակի : Իմ  
կարծիքս այն է որ յատենի ընդհ. ժողովոյ  
քննուի այս խնդիրը և արդիւնքը միայն վարչու-  
թեան հաղորդուի 'ի գործադրութիւն : Եթէ  
ժողովը որոշէ զայս և խնդրոյն վրայ վիճարա-  
նութիւնն սխիւ, խօսք ունիմ այն ատեն քանի  
մը միթին կէտեր պարզելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դեռ վեց ատենարանք  
կան որք խօսք խնդրած են, բայց օրը տարա-  
ժամած ըլլալով այս խնդրոյն շարունակութիւնը  
կը պարտաւորիմ յաջորդ նիստին թողուլը յո-  
րում ես ալ իրրեւ երեսփոխան խօսելիք ունիմ  
ներկայ խնդրոյն վրայ : Հիմա միայն ժողովոյ  
գումարման օրը որոշել պէտք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյ նիստերուն  
սովորական օրը՝ մէկ քանի անձի չկրնալ գա-

լուն պատճառաւ : չի կրնար փոփոխութիւն  
կրել, ինչպէս դիտեց Արքայան Նախագահը :  
Ընդհանուր օր մը կայ, որ ամենուն կը յարմարի,  
և այն է ուրբաթը. ըսուեցաւ թէ այս օրը  
միայն Բ. դրան պաշտօնեայ Երեսփոխանաց  
դիւրութիւն կու տայ, և թէ կիւրակէ օրերը  
գումարուելու է. սխալ է այս կարծիքը : Կան  
շատեր՝ որ կիւրակէն չեն զոհեր, իր հանգստի  
և իր ան տնին գործոց պարսպելու յատուկ  
օր մը, բայց բացարձակ չեն ուզեր զայս յայտ-  
նել, այլ կիւրակէ օրը՝ երբ ժողովը գումարեւ,  
կը տեսնես որ գիւանին վրայ շատ մը երեսփո-  
խաններու բացակայութեանց ազդարար նա-  
մակներ զիջուած են, ամենքն ալ անձնական  
տկարութեամբ կամ բանաւոր պատճառաւ բա-  
ցակայ, թէեւ կարելի է որ դիւզերը գտնուին  
գրասանաց համար :

Չ մտնալք յիշելու նաեւ, որ եկեղեցական  
երեսփոխանները գրէթէ բնաւ չեն կրնար գալ  
նոյն օրը, իրենց հոգեւոր պաշտօնովն զբաղ-  
եալ. ուրբաթ օրը մեծ դիւրութիւն կու տայ,  
տէրութեան բոլոր դռներն ու դիւաններ գոց-  
ուած են այն օրը, և շատերը որք տէրութեան  
դիւաններու հետ գործ ունին, ստէպ դատական  
և առեւտրական յարաբերութեանց գործեր  
կամ այլ ո՞ր և է գործ, այն օրը հանգիստ  
մըն է այնպիսեայ համար, և պարտաւոր այտեն  
կ'ունենան ժողովին գալու : ահա այս մտա-  
ծումներով է, որ ի սկզբանէ անտի ընդհանուր  
ժողովոյ մէջ ալ վիճուած և որոշուած է ուր-  
բաթ օրը, իրրեւ սովորական օր գումարման  
ժողովին :

Երկրորդ՝ Դիւանը առաջարկութիւն ըրաւ  
թէ անկանոն կերպով 'ի ժողովարան մտած  
խնդիրներ ետ դառնան, և կանոնաւոր կերպով  
գան ուրկէ որ անկէ գալ, բայց չէ թէ ժող-  
վէն դուրս հանուին, մէյ մ'ալ չդառնալու կեր-  
պով, ինչպէս որ ժողովը չ'ընդունիր և դիւա-  
նը նկատողութեան չ'առնուր դուրսէն նետուած  
թուղթ մը, ինչպէս որ դիւանինս եկաւ պահ մը  
առաջ, նոյնը կընէ և պէտք է ընէ նաև այն-  
պիսի կերպով ներկայացեալ գիրերու և խնդիր-  
ներու համար :

Թէ և Նախագահ Արքայանը ուզեր է այդ  
հանրագիրները ընդհ. ժողովին բերել, բայց  
պէտք է զիտցնէ նաև վարչութեան այդ խնդ-  
րոյն վրայ ըրած տնօրէնութիւնները և անոր  
կարեւոր պարագաները՝ ինչպէս Երեսփոխան-  
ներէն ոմանք ալ այս մտքը դիտողութիւններ

ըրին . ուստի կը կրկնեմ զոր ինչ պատիւ ունե-  
ցայ առաջարկել ի սկզբան յանուն դիւանին,  
վերադարձնել այս հանրագիրները Ս. Պատրի-  
արքին և վարչութեան, որ իր տեղեկագրովը  
մեզի դարձեալ առնէ բերէ. և ժողովը նոյն  
տեղեկագրին վրայ քննէ խնդիրը : Եթէ խնդ-  
րոց ներկայացման մէջ, այն բնական ընթացքը  
չբռնենք պաշտօնական մարմնոց հետ, ան-  
կարգ շփոթութեանց մէջ կը դնենք :


Աւստի կ'առաջարկեմ որ դիւանին այս ա-

առաջարկութիւնը նախ քուէի դրուի. եթէ ասի  
մէրժուի, այն ատեն խնդրին վիճարանութիւնը  
գալ նիստին խնդրոց կարգն անցնի :

Ատենապետ էֆէնտին թաղուած է խըն-  
դիրը առաջիկայ նիստին ըսելով, ատենը կը  
գոցէ :

ՓՈՒԱՏԵՆԱՊԵՏ  
Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ


ԱՏԵՆԱՊԵՏ  
ՌՈՒՍԻՆԵԱՆ



Die ...  
 ...  
 ...


Die ...  
 ...  
 ...

...  
 ...



...  
 ...  
 ...

...  
 ...  
 ...



182

...

...

ԳԻՆ 2 ՂՐՇ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա, և կը  
դտնուի ամեն դրամաճառաց քով և Նկեղեցեաց բանկաները: